խօսք բացին այն մասին, որ իրենք ահագին տնտեսական զիջումներ արին այն պայմանով, որ հայերն էլ զիջեն սահմանային խնդրում, հայկական պատուիրակութեան նախագահ Ստ. Մամիկոնեանը կտրուկ կերպով ընդհատեց. «Հողային հարցը չպէտք է կապել տնտեսական հարցի հետ. հողային հարցերը քաղաքական հարցեր են և զիջումը այս ասպարէզում կարող է լինել միայն բարձրագոյն կարգի քաղաքական պատճառներով: Վագոնների ու շոգեշարժերի փոխարէն հող չի կարելի զիջել»:

Սահմանային հարցը այս անգամ էլ մնաց անլոյծ: Նա վէճի առարկայ էր և արտասահմանում հայ և վրացի պատուիրակութիւնների միջև և նոյն խոշընդոտներին էր հանդիպում, ինչ որ և Կովկասում: Խորհրդաժողովը, սակայն, մի քայլ արաւ ուրիշ հարցերում. նոյեմբ. 3-ին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրուեցին երկու դաշնագրեր, որոնք անպայման նպաստում էին հայ-վրացական մերձեցման տեսակէտից: Առաջին դաշնագիրը ասում էր.

«Վրաստանի կառավարութիւնը՝ ներկայացած ի դէմս ներքին գործերի և զօրական նախարար Նոյ Վիսարիոնովիչ Ռամիշվիլու և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր ժողովի փոխ-նախագահ՝ Սիմէոն Գուրգենովիչ Մդիվանու մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ ի դէմս Ստեփան Գրիգորեան Մամիկոնեանի և Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան Խաչատրբեանի միւս կողմից, — ծանօթանալով լիազօրութիւնների հետ և, գտնելով դրանք պահանջած ձևի և պատշաճ կարգի, կնքեցին սոյն դաշնագիրն առ այն, որ.

1. Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները և վրաց երկաթուղիներով Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրող ապրանքների համար սահմանւում է ազատ փոխադրութիւն, այսինքն՝ փոխադրութիւն առանց մաքսի:

2. Սոյն դաշնագիրը կնքւում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը իրաւունք ունի յայտարարել վերաքննել դաշնագիրը և այս դէպքում՝ դաշնագիրն իր ոյժի մէջ մնում է այդ յայտարարութեան օրւանից սկսած վեց ամսւայ ընթացքում: Եթէ այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննութեան մասին համաձայնութեան չգան — դաշնագիրը կորցնում է իր ոյժը:

3. Հաստատւած դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիսում երկու շաբաթւայ ընթացքում:

4. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ»:

Երկրորդ դաշնագիրը վերաբերւում էր «Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ վիճելի խնդիրները համաձայնութեամբ կամ պարտադիր իրաւարքի միջոցով լուծելու» հարցին.

«1. Դաշնագիրը կազմող պետութիւնները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնները՝ պարտաւորւում են իրանց մէջ գոյութիւն ունեցող, այլ և ծագելիք հնարաւոր բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ, իսկ եթէ դա չկայանա, պարտադիր իրաւարքի միջոցով: